



*Համարը* N 1044-Ն  
*Տիպը* Որոշում  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2002.08.14/33(208)  
Հոդ. 745

*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն  
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ  
*Վավերացնող մարմինը* ՀՀ Նախագահ  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 24.08.2002

*Տեսակը* Ինկորպորացիա  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունման ամսաթիվը* 04.07.2002  
*Ստորագրման ամսաթիվը* 24.07.2002  
*Վավերացման ամսաթիվը* 30.07.2002  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում են»*  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
30 հուլիսի 2002 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

4 հուլիսի 2002 թվականի N 1044-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երրորդ և 17-րդ հոդվածի երկրորդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետությունում երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպումն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից տրվող լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2002 թ. հուլիսի 24  
Երևան

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

1. Հայաստանի Հանրապետությունում երկաթուղային տրանսպորտի բնագավառում լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենսդրական այլ ակտերով և սույն կարգով:

2. Սույն կարգը սահմանում է երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը:

3. Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների պահանջներին համապատասխան:

4. Երկաթուղային տրանսպորտի գործունեությունը կազմակերպելու համար սույն կարգով տրված լիցենզիաները գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզավորումն ու լիցենզիաների (այսուհետ՝ լիցենզիա) հատկացումն իրականացնում է լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին)՝ լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

6. Լիցենզավորող հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարը:

7. Լիցենզավորված անձը երկաթուղային տրանսպորտի գործունեությունը կազմակերպելու ընթացքում պարտավոր է ապահովել սահմանված անվտանգության, հասարակական կարգի պաշտպանության, բնապահպանական ու սանիտարահամաճարակային, հիգիենիկ, հակահրդեհային նորմերի և կանոնների պահպանումը:

8. Լիցենզիա ստանալու համար հայտը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացվել փոստով, թղթային կամ էլեկտրոնային տարբերակով: Էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան: Թղթային եղանակով փաստաթղթերը ներկայացնելիս՝ պատճենների հետ միաժամանակ ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, որոնք պատճենների հետ համադրելուց հետո անմիջապես վերադարձվում են հայտատուին: Փոստով հայտ ներկայացնելու դեպքում լիցենզիան տրվում է ներկայացված փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ համադրելուց հետո՝ դրանց նույնական լինելու դեպքում: Փաստաթղթերը նույնական չլինելու դեպքում լիցենզիան հայտատուին չի տրամադրվում, և լիցենզիա տալու մասին լիցենզավորող մարմնի համապատասխան հրամանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չեղյալ է ճանաչվում:

**(8-րդ կետը փոփ. 28.04.11 N 636-Ն, 29.03.12 N 367-Ն, խմբ. 05.04.12 N 519-Ն)**

8.1. Հայտատուները լիցենզավորող մարմին են ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն N 1 ձևի:

2) հայտատուի անձնակազմի՝ տվյալ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ համապատասխան բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության մասին դիպլոմների (վկայական) պատճենները և (կամ) տվյալ մասնագիտությամբ վերջին 5 տարվա ընթացքում ոչ պակաս, քան 3 տարի անընդմեջ աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերը:

3) երկաթուղային տրանսպորտի գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող երկաթուղային շարժակազմի, տեխնիկական սարքավորումների տեխնիկական անձնագրերը կամ արտադրող գործարանի կողմից տրված սերտիֆիկատը կամ դրանց վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացությունը:

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

**(8.1-ին կետը լրաց. 05.04.12 N 519-Ն)**

**9. (կետն ուժը կորցրել է 05.04.12 N 519-Ն)**

10. Արգելվում է հայտատուից պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կարգով:

**11. (կետն ուժը կորցրել է 05.04.12 N 519-Ն)**

12. Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման համար գանձվում է պետական տուրք՝

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

13. Լիցենզիա ստանալու հայտը գրավոր մերժվում է լիցենզավորող մարմին այն մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում:

*(13-րդ կետը փոփ. 05.04.12 N 519-Ն)*

14. Լիցենզիա ստանալու հայտը մերժելու մասին որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

15. Լիցենզիայի ձևաթղթերն ստորագրվում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետի կողմից և կնքվում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության` Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր` հայերեն անվանամաբ կլոր կնիքով:

*(15-րդ կետը խմբ. 05.04.12 N 519-Ն)*

16. Լիցենզիայի հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածում նշված հիմքերի առկայության դեպքում:

17. Հանձնաժողովի եզրակացությունը հայտատուին պատշաճ ձևով հանձնվում կամ ուղարկվում է հանձնաժողովի նիստի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

*(17-րդ կետը խմբ. 05.04.12 N 519-Ն)*

18. Լիցենզիան տրվում է անժամկետ:

19. Լիցենզավորված իրավաբանական անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ անվան կամ բնակության վայրի փոփոխման դեպքերում լիցենզիայի վերաձևակերպումը կատարվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով:

*(19-րդ կետը փոփ. 05.04.12 N 519-Ն)*

19.1. Լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

*(19.1-ին կետը լրաց. 05.04.12 N 519-Ն)*

20. Լիցենզավորված անձի կողմից լիցենզավորման պահանջների և պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է լիցենզավորող մարմինը:

21. Լիցենզավորող մարմինն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ստուգումներ անցկացնելու լիցենզավորված անձի կողմից իրականացվող գործունեության` լիցենզավորման պահանջներին և պայմաններին համապատասխանության նպատակով:

22. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-22-րդ հոդվածներով սահմանված կարգով լիցենզավորող մարմինը վարում է լիցենզիաների գրանցամատյանները և կազմում լիցենզավորված անձանց անհատական գործերը:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովույան**

Ձև N 1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ա Յ Տ**

**ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ  
ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայտատու \_\_\_\_\_  
(իրավաբանական անձի անվանումը, ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը կամ անհատ  
ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

Գտնվելու կամ հաշվառման վայրը \_\_\_\_\_  
(իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրը)

Պետական գրանցման կամ հաշվառման համարը \_\_\_\_\_  
(իրավաբանական անձի պետական գրանցման կամ  
անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը)

Խնդրում եմ տրամադրել լիցենզիա՝ որպես \_\_\_\_\_  
(ենթակառուցվածքի կառավարիչ, սեփականատեր,  
փոխադրող և այլք՝ համաձայն «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի)

Երկաթուղային տրանսպորտի գործունեություն իրականացնելու համար:

Կից ներկայացնում եմ՝

1) անձնակազմի՝ տվյալ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ համապատասխան բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության մասին դիպլոմների (վկայական) պատճենները և (կամ) տվյալ մասնագիտությամբ վերջին 5 տարվա ընթացքում ոչ պակաս, քան 3 տարի անընդմեջ աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերը՝ -----էջ.

2) երկաթուղային տրանսպորտի գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող երկաթուղային շարժակազմի, տեխնիկական սարքավորումների տեխնիկական անձնագրերը կամ արտադրող գործարանի կողմից տրված սերտիֆիկատը կամ դրանց վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացությունը՝ -----էջ.

3) պետական տուրքի անդորրագիր՝ -----էջ:

Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Հայտատու \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)  
\_\_\_\_\_  
(պաշտոնը) \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 թ.

(ձևը լրաց. 05.04.12 N 519-Ն)  
(հավելվածը փոփ. 28.04.11 N 636-Ն, 29.03.12 N 367-Ն, խմբ., լրաց., փոփ. 05.04.12 N 519-Ն)

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2002 թվականի  
հունիսի 4-ի N 1044-Ն որոշման

26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Ն

Տրվում է \_\_\_\_\_

(իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ համար՝  
անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործունեության տեսակը՝

Երկաթուղային տրանսպորտի  
գործունեության կազմակերպում

Լիցենզիայի գործողության ժամկետը՝

անժամկետ

Լիցենզիան տալու ամսաթիվը

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

\_\_\_\_\_

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

(հավելվածը փոփ. 05.04.12 N 519-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան